ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 155-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0017-0005 ծածկագրից առանձնացված 0.00354 հա մակերեսով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան, Կենտրոնական փողոց, 28/2 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 11
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 156-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Արեն Վոլոդյայի Գրիգորյանի կողմից լիազորված անձ Վալիդա Լևոնի Ղևոնդյանի (գրանցված է սեղանամատյանում N1246) դիմումը համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0040-0010 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ , Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ,42-րդ փողոց, 2 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 157-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Հենրիկ Հրաչիկի Հովակիմյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0071-0037 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ,5-րդ փողոց ,35 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 11
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 158 -Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Վահան Գուրգենի Հովսեփյանի դիմումը և համայնքային ծառայության առաջատար մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0018-0035 ծածկագրի անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ ,Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ,39-րդ փողոց, 6 հողամաս:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գիանցման:

3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 27.05.2022թ. թիվ 132-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 11
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 159-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետով՝

Որոշում եմ.

1.Լոռու մարզի Թումանյան համայնքի Մարց բնակավայրում գտնվող, Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող, 06-071-0101-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0.01 հա գյուղատնտեսական նշանակության գյուղ այլ հողատեսք գործառնական նշանակությունը փոխել գյուղատնտեսական խոտհարք գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2024 թ. ապրիլի 11
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 160-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՄՈ ՀՐԱՆՏԻ ՇԵԿՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-035-0106-0013 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.356635 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 23 հուլիսի 2015 թվականի N 828–Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 10/04/2043թ. N 01/111.3/03142-2024 գրությունը՝

Որոշում եմ.

1. Կամո Հրանտի Շեկոյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնքի Դսեղ գյուղի կադաստրային քարտեզի 06-035-0106-0013 ծածկագրով 0.356635 հա մակերեսով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության հողամասը փոխադրել արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության:
2. Անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի հողային հաշվեկշռում:
3. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24 թ. ապրիլի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 161-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՄԵԿՀԱՐԿԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում /վկայական՝ N 27032024-06-0011/ Նշան Վիլունի Թումանյանի կողմից լիազորված անձ (գրանցված է սեղանամատյանում N 30 տրված 08.01.2024թ.) Գարիկ Սուրենի Գաբոյանի կողմից մեկ հարկանի բնակելի տան,ավտոտնակի և պարիսպի կառուցման /մուտք՝ 11.04.2024թ. թիվ 203/ նախագծման թույլտվության հայտը՝

Որոշում եմ.

Բավարարել Նշան Վիլունի Թումանյանի կողմից գ.Դսեղ,3-րդ փողոց, թիվ 26 հասցեում գտնվող կադաստրային 06-035-0003-0018 ծածկագրի հողամասում Նշան Վիլունի Թումանյանի կողմից կառուցման նախագծման հայտը և տրամադրել նախագծման թույլտվություն /ճարտարապետահատակագծային առաջադրանք/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 24թ. ապրիլի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 162-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10 հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

Որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2024թ. ապրիլի 1-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 136-Ա որոշման թիվ 4 հավելվածը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 24թ. ապրիլի 15
ք.Թումանյան

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Հաստատված է
Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2024 թվականի ապրիլի 15-ի N 162 -Ա որոշմամբ

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ, ծածկագիր՝ (ծածկագիրը՝ 3.3 -12)

ա) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) 2-րդ կարգի մասնագետի (այսուհետ՝ Մասնագետ) պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում.

բ) Մասնագետին «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի քարտուղարը (այսուհետ՝ Քարտուղար).

1.2. Ենթակա և հաշվետու է.

ա) 2-րդ կարգի մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Քարտուղարին.

բ) 2-րդ կարգի մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի.

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները.

2-րդ կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է աշխատակազմի 1-ին կարգի մասնագետը կամ աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետներից մեկը՝ Քարտուղարի հայեցողությամբ.

Օրենքով նախատեսված դեպքերում Մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում.

1.4. Աշխատավայրը.

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, Հ.Թումանյանի անվան հրապարակ,շ.1, վարչական ղեկավարի նստավայր.

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Մասնագետը՝

ա) կատարում է Քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ) ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.

գ) անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և անմիջական ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

դ) իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառում, կազմում և Քարտուղարին է ներկայացնում համայնքի հողերի հաշվեկշռի նախագիծը.

ե) անմիջական ղեկավարի հանձնարարությամբ վերահսկում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործումը և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանումը.

զ) անմիջական ղեկավարի հանձնարարությամբ վերահսկում է բնակավայրն սպասարկող անասնաբույժի կողմից անասնահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման և ծառայությունների դիմաց տեղական վճարի գանձմանը.

է) իրականացնում է անասնաբուծության դրության մասին, գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի և աշնանացանի ընթացքի իրականացման ամսական հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությունների տրամադրումը.

ը) անմիջական ղեկավարի հանձնարարությամբ և իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է համայնքում իրականացվող բնապահպանական միջոցառումների կազմակերպմանը.

թ) իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է համայնքում իրականացվող աղբահանության և սանմաքրման աշխատանքների կազմակերպմանը.

ժ) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է Քարտուղարին.

ի) իրականացնում է իր առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի առաջարկությունների, եզրակացությունների և այդ փաստաթղթերի պահպանության արխիվացման աշխատանքները.

լ) Քարտուղարի հանձնարարությամբ այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է աշխատակազմի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

խ) կազմում և անմիջական ղեկավարին է ներկայացնում համայնքի գլխավոր հատակագծի,

հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների նախագծերը.

ծ) համակարգում է համայնքի գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման աշխատանքները.

կ) Քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին.

հ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

2-րդ կարգի մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ.

3. Կազմակերպական շրջանակը

3.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը.

Մասնագետը՝

ա) աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.

բ) կատարում է Քարտուղարի հանձնարարականները.

գ) պատասխանատվություն է կրում իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորությունները վերազանցելու համար.

3.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները.

Մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը.

3.3. Շփումները և ներկայացուցչությունը.

Մասնագետը՝

ա) աշխատակազմի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում, այդ թվում՝ իր գործունեության բնագավառին առնչվող հարցերով աշխատակազմ այցելած համայնքի բնակիչների հետ.

բ) աշխատակազմից դուրս շփվում է իր լիազորությունների շրջանակներում, Քարտուղարի հանձնարարությամբ և (կամ) համաձայնությամբ.

գ) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի.

3.4. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը.

Մասնագետը՝

ա) Քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների լուծմանը և գնահատմանը.

բ) բարդ խնդիրների բացահայտմանը,դրանց ստեղծագործական և այլընտրանքային

լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի.

4. Պաշտոնին ներկայացվող պահանջները

4.1. Կրթություն, որակավորման աստիճանը.

Մասնագետն ունի առնվազն միջնակարգ կրթություն.

4.2. Մասնագիտական գիտելիքները և հմտությունները.

Մասնագետը՝

ա) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկելու կարգի մասին», «Գույքահարկի մասին», «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին», «Հողի հարկի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Բնության պահպանության մասին», «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Անասնաբուժության մասին» Հ Հ օրենքների, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

գ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը.

Աշխատանքային ստաժը և աշխատանքի փորձը պարտադիր չեն.

5. Համայնքային ծառայության դասային աստիճանը.

2-րդ կարգի մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2024թվականի N 163-Ա

<<ՆԱԻՐԱ ՔՈՉԱՐՅԱՆ>> ԱՁ-ԻՆ 01.04.2024Թ.-30.06.2024Թ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 22-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճաարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 85-Ն որոշման պահանջով և <<Նաիրա Քոչարյան>> ԱՁ-ի տնօրեն Նաիրա Քոչարյանի հայտը՝

Որոշում եմ.

1.<<Նաիրա Քոչարյան>> ԱՁ-ի տնօրեն Նաիրա Քոչարյանին տալ 01.04.2024թ.-30.06.2024թ.ժամանակահատվածում, Թումանյան համայնքի, գ.Քարինջ, Մ.Եղինյանի փ., նրբ.2,տ.8 հասցեում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքի թույլտվություն:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում <<Նաիրա Քոչարյան>> ԱՁ-ի իրավական ակտն ընդունելու մասին իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 24 թ. ապրիլի 16
ք.Թումանյան